

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ
/ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ, ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ, ԱՌԿԱ, ՀԵՌԱԿԱ/

1921 թ. Երևանի պետական համալսարանում բացվել է Մանկավարժության ֆակուլտետը, որի դեկանն է եղել դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Էդիլյանը: Նույն տարում Մանկավարժության ֆակուլտետի կառուցվածքում ձևավորվել է մանկավարժության ամբիոնը, որը համալսարանի հնագույն ամբիոններից է՝ անցնելով 100-ամյա գիտակրթական ուղի: Մանկավարժության ամբիոնի կայացման և գիտակրթական աշխատանքների կազմակերպման ու զարգացման գործում իրենց ծանրակշիռ ներդրումն են ունեցել ճանաչված պրոֆեսորներ Գ. Էդիլյանը, Ա. Շավարշյանը, Մ. Սանթրոսյանը, Ա. Մովսիսյանը, Հր. Քարամյանը, Թ. Ջուհարյանը, Հ.Մախչանյանը, դոցենտներ Ա. Իգնատյանը, Ս. Խուդոյանը, Ալ. Մանուկյանը, Թ. Հուրիխանյանը, Թ. Բալասանյանը, Լ. Ալեքսանյանը:


Ամբիոնի հիմնադիրների ստեղծած արժեքների պահպանման ու զարգացման գործին ներկայումս իրենց մեծ վաստակն են բերում ամբիոնի վարիչ, դոկտոր, պրոֆեսոր Ն. Հարությունյանը, դոցենտներ Թ. Հարությունյանը, Գ. Բաբայանը, Վ. Գյուլբուդաղյանը, Ա. Ղազարյանը, Ա. Գրիգորյանը, Ա. Աշիկյանը, Ա. Ալեքսանյանը, Մ. Ավետիսյանը, Լ. Հայրապետյանը և ուրիշներ:

2017 թ. հուլիսի 6-ին ԵՊՀ գիտխորհուրդը միաձայն որոշում կայացրեց ստեղծել Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոն /19 հուլիս, 2017 թ., ռեկտորի թիվ 133, 46 հրաման/, իսկ 2017 թ. դեկտեմբերի 23-ին ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը հաստատեց ԵՊՀ գիտխորհրդի որոշումը: Մանկավարժության ամբիոնը դուրս եկավ ԵՊՀ Հայ բանասիրության ֆակուլտետի կազմից, և ամբիոնի բազայի հիման վրա ձևավորվեց Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնը: Վերջինս ԵՊՀ ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան և ԵՊՀ ու Կենտրոնի կանոնադրության /2018, փետրվար/ հիման վրա:

Կենտրոնում դասավանդում են 5 գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, 15 գիտությունների թեկնածու, դոցենտ, 2 մանկավարժական գիտությունների թեկնածու, ասիստենտ և 5 դասախոս:

Կենտրոնում սովորում է 221 ուսանող: Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնում գործում են Կենտրոնի գիտխորհուրդը, Մանկավարժության ամբիոնը, Որակի

ապահովման հանձնաժողովը, Մեթոդական խորհուրդը, Մրցութային հանձնաժողովը, Արհմբյուրոն, ՈԻԽ-ն և ՈԻԳԸ:



Վերջին 20 տարիների ընթացքում մանկավարժության ամբիոնն ուսումնասիրել և զարգացրել է *մանկավարժության 14 գիտաճյուղ*, մանկավարժության պատմություն, համեմատական մանկավարժություն, սոցիալական մանկավարժություն, կրթության կառավարում, մանկավարժական վալեոլոգիա, մանկավարժական աքսելոգիա, մանկավարժական անտրոպոլոգիա, մանկավարժական ինովատիկա, երջանկության մանկավարժություն, արվեստի մանկավարժություն, մանկավարժական աքմեոլոգիա, մանկավարժական ֆուտուրոլոգիա, մանկավարժական քվալիմետրիա և մանկավարժական ռիսկաբանություն: Ուսումնասիրությունների արդյունքում տպագրվել է շուրջ 300 գիտական հոդված ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանյան տարբեր երկրների գիտական հանդեսներում /Ուկրաինա-Չերկասի համալսարանի Вестник, Կրոպիվնիցկիի պետական համալսարանի միջազգային գիտաժողովի ժողովածու և Լեհաստանի Վարշավայի համալսարանի միջազգային գիտական նյութերի ժողովածու/ :

Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնն իրականացնում է արդյունավետ գիտակրթական գործունեություն՝ իրականացնելով երեք մասնագիտական կրթական ծրագրեր:

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐՇՈՒԹՅՈՒՆ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԲԱԿԱԼԱՎՐԻՍ



2010-2011 ուստարում բացվել է «Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագիրը բակալավրիատում: Վերջինիս նպատակն է ՀՀ հանրակրթական դպրոցների համար պատրաստել սոցիալական մանկավարժներ, ովքեր կնպաստեն հանրակրթության ոլորտում երեխաների սոցիալական, հաղորդակցական, հոգեբանամանկավարժական տարաբնույթ խնդիրների և սահմանափակ կարողությունների տեր երեխաների ներառական ուսուցման հիմնահարցի լուծմանը՝ ելնելով իրենց մասնագիտական գործունեության նպատակից, խնդիրներից, գործառույթներից, թիրախային խմբերի առանձնահատկություններից և տեխնոլոգիաներից:

Կրթական ծրագրի նպատակն է ուսանողներին ներկայացնել սոցիալական մանկավարժության ուսումնասիրության հիմնախնդիրները, մեկնաբանել սոցիալական միջավայրի դաստիարակչական մեծ ներգործությունը տարբեր տարիքային խմբերի և տարբեր սոցիալական խնդիրներ ունեցող երեխաների զարգացման գործընթացի վրա՝ սոցիալականացման համատեքստում:

Հանրակրթական դպրոցում սոցիալական մանկավարժն իրականացնում է հետևյալ գործառնությունները. նա ուսումնասիրում, հետազոտում, ախտորոշում է աշակերտի առջև ծառայած խնդիրը, այնուհետև այն լուծելու համար օգնում, աջակցում, ուղղորդում, վերադաստիարակում, խորհրդատվություն և վերականգնողական (հոգեբանամանկավարժական) աշխատանքներ է իրականացնում: Սրանք կատարվում են տարբեր մեթոդների և տեխնոլոգիաների միջոցով: Հայաստանի հանրակրթական դպրոցներում սոցիալական մանկավարժի անհրաժեշտությունն ու կարևորությունը ամրագրված է ՀՀ հանրակրթության պետական կրթակարգում:

2021-2022 թթ. ուսումնական տարվա առկա ուսուցման առաջին կուրսի ուսանողների համար բակալավրիատում նախատեսված կրեդիտային համակարգով, ընդհանուր կրթական կառուցամասի/ կամընտրական/ և մասնագիտական կառուցամասի պարտադիր դասընթացներն են.

Ընդհանուր կրթական կառուցամասի դասընթացներ.

1. Հայոց լեզու և խոսքի մշակույթ -2կրեդիտ
2. Օտար լեզուներ-4կրեդիտ
3. Հայոց պատմության հիմնահարցեր-2 կրեդիտ
4. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ-2 կրեդիտ
5. Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ-2 կրեդիտ
6. Ֆիզ.դաստիարակություն-2կրեդիտ

Մասնագիտական կառուցամասի պարտադիր դասընթացներ.

Առաջին կիսամյակ

1. Մանկավարժության տեսություն 1- 5կրեդիտ /46ժ.դաս./14ժ.սեմինար/
2. Սոցիալական քաղաքականություն- 4կրեդիտ /60ժ.դաս./
3. Սոցիալական մանկավարժության հիմունքներ- 5կրեդիտ /46ժ.դաս./14ժ.սեմինար/

Երկրորդ կիսամյակ

1. Տարիքային անատոմիա, ֆիզիոլոգիա և հիգիենա- 4կրեդիտ, /46ժ.դաս./14ժ.սեմինար/
2. ՀՀկրթության համակարգը- 4կրեդիտ /46ժ.դաս./14ժ.սեմինար/
3. Մանկավարժության տեսություն 2-4կրեդիտ/46ժ.դաս./14ժ.սեմինար/
4. Սոցիալական մանկավարժություն -5 կրեդիտ/46ժ.դաս./14ժ.սեմինար/

**<<ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ>> ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ / առկա, հեռակա/**

Կենտրոնը մասնագիտական կրթական ծրագրեր է իրականացնում մագիստրատուրայում՝ <<Կրթության կազմակերպում>> և <<Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա>>:



1998 թ. Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի Մանկավարժության ամբիոնը բացել է <<Կրթության կազմակերպում>> կրթական ծրագիրը: <<Կրթության կազմակերպում>> մագիստրոսական ծրագիրը պատրաստում է կրթության կազմակերպիչներ հանրապետության հանրակրթության և բարձրագույն կրթության ոլորտների համար:

<<Կրթության կազմակերպում>> մագիստրոսական ծրագրի շրջանակներում կրթական գործի ապագա կազմակերպիչները ծանոթանում են ՀՀ կրթության համակարգի, նրա կառուցվածքի, կառավարման, ինչպես նաև կրթական բարեփոխումների մասին, որոնք կարևոր նշանակություն ունեն կրթության որակի ապահովման և զարգացման գործում: Հանգամանորեն վերլուծվում և քննարկվում են կրթական քաղաքականության նպատակները, խնդիրները, ռազմավարությունը, առանձնահատկությունները և իրականացման ճանապարհները:

<<Կրթության կազմակերպում>> մագիստրոսական ծրագրում ուսանելու տարիներին ուսանողները ծանոթանում են կրթության օրենսդրական դաշտին, անհրաժեշտ գիտելիքներ են ձեռք բերում կրթության կառավարման հիմնախնդիրների և կրթության ֆինանսավորման եղանակների մասին: Այս ամենի արդյունքում կրթական գործի ապագա կազմակերպիչները գիտամանկավարժական պրակտիկայի ընթացքում կարողանում են տեսական գիտելիքները կիրառել կոնկրետ իրավիճակում. ճկուն, արագ դիրքորոշումներ ունենալ, հիմք ընդունել կառավարման սկզբունքները, մեթոդներն ու ոճերը՝ բարձրացնելու համար կառավարման արդյունավետությունը:

<<Կրթության կազմակերպում>> մագիստրոսական ծրագիրն իրականացվում է առկա և հեռակա ուսուցմամբ:

2006 թվականից մինչ օրս այս կրթական ծրագրում անհատական գրաֆիկով սովորել և սովորում են սփյուռքահայ ուսուցիչներ և տնօրեններ Լիբանանից, Սիրիայից, Թուրքիայից, Եգիպտոսից և Իրանից:

<<ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ>> / ԱՌԿԱ/

Ընդհանուր կրթական կառուցամասի դասընթացներն են.

1. Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում -3կրեդիտ
2. Օտար լեզուներ-6կրեդիտ
3. Հետազոտության պլանավորում և մեթոդներ-3 կրեդիտ

Մասնագիտական կառուցամասի պարտադիր դասընթացներն են..

Առաջին կիսամյակ

- 1.Մասնագիտության արդի հիմնախնդիրներ-3 կրեդիտ/ 30ժ. դաս./
2. Կրթության կառավարման հիմունքներ -6կրեդիտ/30ժ. դաս./30ժ. սեմինար/
- 3.ՀՀ կրթության օրենսդրություն 3 կրեդիտ/30ժ. դաս./
4. Կառավարման տեսություններ- 3 կրեդիտ/30ժ. դաս./

Երկրորդ կիսամյակ

- 1.Բարձրագույն կրթության պլանավորում -3 կրեդիտ/30ժ. դաս./
2. Հանրակրթության պլանավորում -3 կրեդիտ/30ժ. դաս./
3. Կրթության որակի ապահովում և վերահսկողություն-6կրեդիտ/30ժ. դաս./30ժ. սեմինար/
4. Ուսումնական գործընթացի կազմակերպումը բուհում -6 կրեդիտ/30ժ. դաս./30ժ. սեմինար/
- 5.Ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպումը հանրակրթական դպրոցում -6 կրեդիտ /30ժ. դաս./30ժ. սեմինար/

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ

Գիտական սեմինար- 6կրեդիտ /60ժ. սեմ./

<<ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ>> / ՀԵՌԱԿԱ/

Ընդհանուր կրթական կառուցամասի դասընթացներն են.

1. Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում -3կրեդիտ
2. Օտար լեզուներ-6կրեդիտ
3. Հետազոտության պլանավորում և մեթոդներ-3 կրեդիտ

Մասնագիտական կառուցամասի պարտադիր դասընթացներն են..

Առաջին կիսամյակ

1. Մասնագիտության արդի հիմնախնդիրներ-3 կրեդիտ/ 10ժ. դաս./
2. Կրթության կառավարման հիմունքներ -6կրեդիտ/20ժ. դաս /
3. ՀՀ կրթության օրենսդրություն 3 կրեդիտ/10ժ. դաս./
4. Կառավարման տեսություններ- 3 կրեդիտ/10ժ. դաս./

Երկրորդ կիսամյակ

1. Բարձրագույն կրթության պլանավորում -3 կրեդիտ/10ժ.. դաս./
2. Հանրակրթության պլանավորում -3 կրեդիտ/10ժ. դաս./
3. Կրթության որակի ապահովում և վերահսկողություն-6կրեդիտ/20ժ. դաս /
4. Ուսումնական գործընթացի կազմակերպումը բուհում -6 կրեդիտ/20ժ. դաս./

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ

Գիտական սեմինար- 6 կրեդիտ /20ժ. սեմ./

**<<ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ և ՄԵԹՈԴԻԿԱ>>ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳԻՐ/հեռակա/**



2016-2017 թթ. ուսումնական տարում Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնը մագիստրատուրայում բացել է երկրորդ մագիստրոսական կրթական ծրագիրը՝ <<Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա>> մասնագիտությամբ:

Ծրագրի նպատակն է պատրաստել մանկավարժներ հանրակրթական դպրոցների համար: Կրթական ծրագիրը նախատեսված է այն անձանց համար, որոնք ունեն բակալավրի աստիճան կամ դիպլոմավորված մասնագետներ են, սակայն չունեն ուսուցչի որակավորում:

Կրթական ծրագրում կարող են սովորել նաև հանրակրթական դպրոցում գործող ուսուցիչներ, ովքեր չունեն մանկավարժի որակավորում:

Կրթական ծրագրի տևողությունը 1,5 տարի է, ուսուցման ձևը՝ հեռակա:

Ընդհանուր կրթական կառուցամասի դասընթացներն են.

1. Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում -3կրեդիտ
2. Օտար լեզուներ-6կրեդիտ

Մասնագիտական կառուցամասի պարտադիր դասընթացներն են..

Առաջին կիսամյակ

1. Մասնագիտության արդի հիմնախնդիրներ-3 կրեդիտ/ 10ժ. դաս./
2. Ընդհանուր մանկավարժություն 3 կրեդիտ/10ժ. դաս./
3. Տարիքային մանկավարժություն 3 կրեդիտ/10ժ. դաս./
4. Սովորողների առաջնորդության զարգացում- 3 կրեդիտ/10ժ. դաս./

Երկրորդ կիսամյակ

1. Կրթական տեխնոլոգիաներ -3 կրեդիտ/5ժ. դաս. 5ժ.սեմ./
2. Համայնքային ազդեցություն -3 կրեդիտ/5ժ. դաս. 5ժ. սեմ./
3. Դասավանդման մեթոդիկա-6կրեդիտ/20ժ. Դաս. /

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ

1. Գիտական սեմինար- 2 կրեդիտ/10ժ. սեմ./
2. Մանկավարժական պրակտիկա -4 կրեդիտ